## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 մարտի 2010 թվականի N 310-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

**Հայաստանի Հանրապետության**

**վարչապետ** **Տ. Սարգսյան**

2010 թ. մարտի 31

Երևան

**Հավելված N 2**
**ՀՀ կառավարության 2010 թվականի**
**մարտի 11-ի N 310-Ա որոշման**

## Ց Ա Ն Կ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ

| | Անունը (անվանումը, վերնագիրը) | Բնագավառը (ժանրը, ոճը) | Տեղայնացումը, տարածման շրջանը | Կրողը | Պատմական հակիրճ տեղեկանք (երբ և ինչպես է ձևավորվել, առաջին վկայությունները աղբյուրներում) | Կենսունակությունը (նախնական գործառույթները, պատմական, մշակութային, տնտեսական, հասարակական նշանակության պահպանվածությունը, զարգացումներն ու փոփոխությունները) | Բնութագիրը (եզակիությունը, պատմական, էթնո-մշակութային, սոցիալական և այլ առանձնահատկությունը) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16. | *Ավանդական դարբնագործություն* | Ավանդական արհեստների հետ կապված հմտություններ և գիտելիքներ | Մինչև 20-րդ դարի առաջին կեսը տարածված է եղել ոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում: Ներկայում դարբնոցային ավանդական տեխնոլոգիական հմտությունների վրա հենված արհեստանոցներ կան Աշտարակ, Գյումրի և Երևան քաղաքներում: | Դարբիններ, որոնք դեռևս պահպանում են ավանդական դարբնոցային տեխնոլոգիաներով աշխատելու սովորույթը և ավանդական տեխնոլոգիական հմտությունների կրողներն են: | Առաջին հիշատակությունը տրված է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ, այնուհետև միջնադարյան այլ պատմիչների երկերում, որոնցից հիշատակելի են հատկապես Վանական վարդապետի և Ստեփանոս Օրբելյանի թողած հիշատակումները: | Փոխանցվում է վարպետ դարբինների կողմից աշակերտներին մեծ մասամբ այն դեպքում, երբ աշակերտի դերում հանդես է գալիս վարպետի կամ մերձավոր հարազատներից մեկի որդին: Առկա է տեխնոլոգիական շղթայի և առանձին բաղադրիչների հետ կապված գիտելիքների և հմտությունների գալիք սերնդին փոխանցման վտանգ: | Տեխնոլոգիական բաղադրիչներն են՝ երկաթ տաքացնելու, կռելու, տաք կամ սառը կոփելու, ջեռուցելու, ջրում մխելու (երկաթը ջրով կոփելը և նրան պողպատի հատկություն հաղորդելը) տեխնոլոգիական, ինչպես նաև օժանդակ փուլերը՝ զոդելն ու գամելը: Հաջորդական տեխնոլոգիական փուլերը կազմում են տեխնոլոգիական շրջան, փուլերի ճիշտ հաջորդականությունը կազմում է տեխնոլոգիական շղթան: Տեխնոլոգիական բաղադրիչներից յուրաքանչյուրը պահանջում է լուրջ վարպետություն՝ հիմնված գիտելիքների, փորձի ու հմտության վրա: |

**ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար** **Դ. Սարգսյան**

REFERENCE

GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

D E C I S I O N

No 310-A of 11 March 2010

# ON APPROVING THE CRITERIA FOR COMPILING LISTS OF INTANGIBLE CULTURAL VALUES AND THE LIST OF VALUES OF INTANGIBLE CULTURAL HERITAGE OF THE REPUBLIC OF ARMENIA

In compliance with Point 3 of Article 7 of the Law of the Republic of Armenia "On Intangible Cultural Heritage" the Government of the Republic of Armenia ***hereby decides:***

To approve the criteria for compiling lists of intangible cultural values and the list of values of the intangible cultural heritage of the Republic of Armenia according to Annexes No 1 and No 2.

Prime Minister of the Republic of Armenia T. Sargsyan

31 March 2010 Yerevan

Annex No 2 to the Decision of the Government of the Republic of Armenia

No 310-A of 11 March 2010

# LIST
# OF INTANGIBLE CULTURAL HERITAGE VALUES OF THE REPUBLIC OF ARMENIA

| | Name (title) | Sphere (genre, style) | Location, distribution region | Bearer | Brief historical reference (when and how it was formed, the first evidence in sources) | Viability (preliminary functions, historical, cultural, economic, public safeguarding, development, and changes) | Characteristics (uniqueness, historical, ethnocultural, social, and other peculiarities) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16. | ***Traditional blacksmithin g*** | Skills and knowledge related to traditional craft | Before the first half of the 20th century, it was spread not only in the cities but in the villages as well. Nowadays, there are workshops based on the traditional technological skills of blacksmithing in Ashtarak, Gyumri, and Yerevan. | Blacksmiths, who still safeguard the habit of working with the traditional blacksmithing technologies and are the bearers of the traditional technological skills. | The first mention is in “The Armenian History” by Movses Khorenatsi, afterward, in the works of other medieval historians, namely the works of Vanakan Vardapet and Stepanos Orbelyan. | Transferred by master blacksmiths to their students namely in cases when their students are their or relative’s sons. There is a danger of the transfer of skills and knowledge to the future generates related to the technological chain and separate components. | The technological components are the following: heating the iron, shaping, forging in hot or cold method, heating, quenching in the water (quenching the iron in the water to give it a steel characteristic), as well as technological and supplementary stages: welding and riveting. The following technological phases compile a technological cycle, the correct sequence of phases compile a technological chain. Each of the technological components requires a serious mastery based on knowledge, experience, and skills. |

Head of Staff of the Government
of the Republic of Armenia D. Sargsyan

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՐՈՇՈՒՄ

15 Ապրիլի 2021, 599 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 310-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոչ նյութական մշակութային արժեքների ցանկերի կազմման չափորոշիչները և ոչ նյութական մշակութային ժառանգության արժեքների ցանկը հաստատելու մասին» N 310-Ա որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

հավելված

Նիկոլ Փաշինյան

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
ապրիլի 15-ի N 599 -Ա որոշման

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 11-ի N 310 - Ա որոշման

# Ց Ա Ն Կ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ

| NN ը/կ | Անվանումը | Բնագավառը | Տարածման շրջանը | Կրողը | Պատմական հակիրճ տեղեկանք | Բնութագիրը (նկարագրությունը, առանձնահատկությունները) | Կենսունակությունը (պատմական, մշակութային, տնտեսական, հասարակական նշանակությունը) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 16. | Ավանդական դարբնություն | Ավանդական արհեստների հետ կապված հմտություններ և գիտելիքներ | Տարրը հիմնականում տարածված է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքում, արհեստանոցներ կան նաև ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքում և մայրաքաղաք Երևանում: | Տարրի կրողները երիտասարդ, միջին և ավագ տարիքի դարբիններն են: | Դարբնության մասին առաջին հիշատակությունը տրված է 5-րդ դարի պատմիչ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատությունում, այնուհետև միջնադարյան այլ պատմագիրների՝ հատկապես Վանական վարդապետի և Ստեփանոս Օրբելյանի երկերում: | Դարբնության արհեստի բաղադրիչներն են երկաթ տաքացնելու, կռելու, տաք կամ սառը եղանակով կոփելու, ջեռուցելու, ջրում մխելու (երկաթը ջրով կոփելը և նրան պողպատի հատկություն հաղորդելը) տեխնոլոգիական, ինչպես նաև օժանդակ փուլերը՝ զոդելն ու գամելը: Տեխնոլոգիական բաղադրիչներից յուրաքանչյուրը պահանջում է լուրջ վարպետություն՝ հիմնված գիտելիքների, փորձի ու հմտության վրա: Վարպետ դարբինների կողմից արհեստի գի- | Ներկայում դարբնոցային ավանդական տեխնոլոգիական հմտությունների վրա հիմնված տարբեր համայնքների արհեստանոցներում և հատկապես Գյումրի համայնքում դարբինների գերդաստաններ կան, որոնք ժառանգական են և անցյալում տարածված համքարությունների ավանդույթների կրողներն են: Հարկ է ընդգծել, որ Գյումրին հանրապետության միակ համայնքն է, որն այսօր կենսունակ է պահում քաղաքային դարբ- |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Վկայություններ կան մինչև 19-րդ դարը գործող դարբինների համքարությունների մասին, որոնք ունեցել են իրենց կանոնադրությունը, դրոշն ու խորհրդանիշը, ինչպես նաև արհեստի պահպանման ու փոխանցման հետ կապված առանձնահատուկ ծեսեր և արարողություններ: Ավանդական դարբնությունը մինչև 20-րդ դարի առաջին կեսը տարածված է եղել ոչ միայն քաղաքներում, այլև գյուղերում: | տելիքներն ու հմտությունները աշակերտներին է փոխանցվում մեծ մասամբ այն դեպքում, երբ աշակերտի դերում հանդես է գալիս վարպետի կամ մերձավոր հարազատներից մեկի որդին: | նության ավանդույթները: Գյումրիի դարբնությունը բացի կենցաղային գործառույթից նաև գեղարվեստական առանձնահատկություններ ունի:<br>Գյումրեցի դարբինները պահպանում են ավանդական դարբնոցային տեխնոլոգիաներով աշխատելու սովորույթը և ավանդական տեխնոլոգիական հմտությունների կրողներն ու փոխանցողներն են: |

ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար Ա. Թորոսյան

# GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

# D E C I S I O N

No. 599-A of 15 April 2021

**REFERENCE**

ON MAKING AMENDMENTS IN DECISION N 310-A OF 11 MARCH 2010 OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA
----------------------------------------------------------------------------------------------------------------

Based on Article 34 of the law “On Normative Legal Acts”, the Government of the Republic of Armenia hereby decides:

1. To rewrite the Appendix 2 of the Decision of the Government of the Republic of Armenia N 310-A of 11 March 2010 “On Approving the Criteria of Compiling Lists of Intangible Cultural Values and the List of Intangible Cultural Heritage Values of the Republic of Armenia” in accordance with the Appendix.

Nikol Pashinyan

SEAL: Staff of the Prime Minister of the Republic of Armenia, Protocol Department, No. 2

Appendix
of the Decision of the Government of the
Republic of Armenia N 599-A of 15 April 2021

Appendix N 2
of the Decision of the Government of the
Republic of Armenia N 310-A of 11 March 2010

# LIST
# OF INTANGIBLE CULTURAL HERITAGE VALUES OF THE REPUBLIC OF ARMENIA

| NN | Name | Sphere | Area of Distribution | Bearer | Brief historical reference | Characteristics (description, features) | Viability (historical, cultural, economic, social significance) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 16. | Traditional blacksmithing | Skills and knowledge of traditional crafts | The element is mainly distributed in the Gyumri community, Shirak marz of the RA. There are workshops also in Ashtarak city, Aragatsotn marz of the RA, and the capital city Yerevan. | The bearers of the element are the blacksmiths of young, middle, and elder ages. | The first mention about the blacksmithing is given in “The Armenian History” of Movses Khorenatsi, a 5th-century Historian, afterward in the works of other medieval historians, mainly in the works of Vanakan Vardapet and Stephen Orbelian. There are pieces of evidence about the blacksmiths’ guilds existing until the 19th century, which had their charter, flag, and symbol, as well as unique rituals and ceremonies of safeguarding and transferring the craft. Until the beginning of the 20th century, blacksmithing was popular not only in the cities but in the villages as well. | The components of the blacksmithing craft are the following: heating the iron, shaping, forging in hot or cold method, heating, quenching in the water (quenching the iron in the water to give it a steel characteristic), as well as technological and supplementary stages: welding and riveting. Each of the technological components requires a special mastery based on knowledge, experience, and skills. The knowledge and skills of master blacksmiths are transferred to their students mainly in cases the students are their or their relatives’ sons. | Nowadays, there are dynasties of blacksmiths in different workshops and specifically Gyumri community based on the skills of traditional blacksmithing technologies, who are inherited and are the bearers of traditions of guilds that were previously popular. It should be noted that Gyumri is the only community in the republic, that today as well keeps the traditions of urban blacksmithing vital. Besides having a household function, the blacksmithing in Gyumri has also artistic peculiarities. Blacksmiths from Gyumri maintain the habits of working with the traditional blacksmithing technologies and are the bearers and transferrers or the traditional technological skills. |

HEAD OF STAFF OF THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA A. TOROSYAN